

ՆԿԱՐԶԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԳԵՈՐԳ ԲԱՇԽՆՋԱՂԵԱՆԻ

I.

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ Ս.

Դարձեալ կ'անցնեն տասնեակ տարիներ, բայց՝ գեղարւեստի նշա-
նակութիւնը համարեա միւլենոյնը կը մնայ մեր ժողովրդի մէջ: Գուցէ
ապագայ սերունդը բազմ ունենայ տեսնելու մեր երկրում գեղար-
ւեստը ծաղկած դրութեան մէջ, գուցէ դա էլ մի պահանջ դառ-
նայ մեր ամբօխի համար: Դու վերջին նամակիդ մէջ մեղադրում ես
մեր հասարակութեանը, որ «նա անտարբեր է դէպի գեղարւեստը, որ
նա անուշադիր է թողնում այն բազմաթիւ ընդունակ երիտա-
սարդներին, որոնք չ'ունենալով միջոց իրանց ընդունակութիւնը մշա-
կելու ու կատարելագործելու, մնում են անյայտութեան մէջ, իսկ
եթէ անհատներին յաջողում է այդ ցաւալի իրողութեանը չ'են-
թարկւելու, դա էլ նրանց բաղդիցն է»:

Այո՛, սիրելիս, քո կարծիքների վերջին կտորը շատ ճիշդ է, բայց
քո նախատինքը հասարակութեան վերաբերեալ, իմ կարծիքով, սխալ
է: Ես չեմ կարող մեղադրել հասարակութեանը: Եւ իրաւ, ի՞նչ ի-
րաւունքով պէտք է պահանջել հասարակութիւնից այն, ինչ որ նա
չի ստացել ոչ ոքից: Մենք Ասիայումք ենք, մեր ամբօխը կրթած է
Ասիայում, ասիական եղանակով: Նա գեղարւեստի վերայ շատ մութ
գաղափար ունի, կամ, աւելի լաւ է ասել, բոլորովին չ'ունի (Խօսքս
ընդհանրութեան մասին է, անհատներին մի կողմն եմ թողնում,
նրանք բացառութիւն են կազմում):

Կովկասեան բնութիւնը այնքան հարուստ և այնքան բազմակողմանի է, որ երկրագնդիս բոլոր երկիրների բնութեան հետ կարող է յաջողութեամբ մրցել. ունի մինչև անգամ մի առաւելութիւն, դա՛ նորա կուսական, մարդու ձեռքով չ'աղաւաղած դրութիւնն է:

Դու զարմանում ես, որ թէպէտ մեր երկիրը ընդունակ է տաղանդներ արտադրելու, սակայն մինչև այսօր չի դուրս եկել ոչ մի հանճարեղ գեղարւեստագէտ, երաժիշտ, նկարիչ, քանդակադործ, դերասան... Ինչո՞ւ ես զարմանում կամ վրդովւում: Գեղարւեստը զարգանում է քաղաքակրթութեան և յառաջադիմութեան հետ միասին, և չը կայ մի յառաջադէմ երկիր կամ քաղաք, ուր զարգացած չը լինի գեղարւեստը:

Մենք ոչ թէ գեղարւեստների ոչ մի տարրական ուսումնարան չ'ունինք, այլ նոյն իսկ մեր դպրոցներում այն նշանակութիւնն ունի նկարչութիւնը, ինչ որ ունի վայելչագրութիւնը: Եթէ մի քանի դպրոցներում նկարչութիւնն էլ միւս առարկաների շարքումն է, դա՛ իմ կարծիքով՝ միմիայն ձևի համար է: Մեր միջնակարգ ուսումնարաններում վաղուց նկարչութեան դասեր գոյութիւն ունին, բայց այնտեղից դուրս եկած բազմաթիւ աշակերտները ոչ թէ միայն նկարել չը գիտեն, այլ մինչև անգամ զաղափար չ'ունին նկարչութեան մասին, չը նայած, որ վկայականներում այդ առարկայից 4 կամ 5 ունին: Քանիցս անգամ առիթ եմ ունեցել լսելու մեր քաղաքակրթւած համարւող երիտասարդներից, թէ ինչպէս մի տեսակ ինքնաբաւականութեամբ պարծեցել են՝ «ровно ничего не смыслию въ живописи»: Ահա այս տեսակ հայեացք ունի մեր հասարակութիւնը գեղարւեստի վերաբերեալ: Թողնենք Կովկասեան բոլոր գաւառները և վերցնենք լուսաւորութեան ու յառաջադիմութեան կենդրոն Թիֆլիսը: Կրկնում եմ, վերցնենք Թիֆլիսը և գեղարւեստին վերաբերեալ մի թեթեւ ակնարկ գցենք, և դու իսկոյն կը համոզւես, որ մեր ժողովրդի ճաշակը այնքան կոպիտ է, որ անընդունակ է որոշել գեղեցիկը տգեղից: Լսի՛ր ինձ:

Յիշո՞ւմ ես երբ, մօտ եօթ տարի սորանից առաջ, քեզ հետ միասին բարձրացանք Թիֆլիսի «Բեթղեհէմ» հինաւուրց եկեղեցին և տաք տաք վիճում էինք հայկական ճարտարապետութեան մասին: Յիշո՞ւմ ես, ինչպէս, ի միջի այլոց նկատեցինք, որ «Բեթղեհէմը»

միակ հայոց եկեղեցին է Թիֆլիսում, որ ամբողջապէս կառուցւած է Ալզետի կապտազոյն գեղեցիկ նրբատաշ քարերից: Յիշո՛ւմ ես նոյնպէս պատերի վերայի արձանագրութիւնները և մի քանի մանր քանդակները, որոնք վիպում էին մեր նախնեաց օրինակելի սէրը և ջերմեռանդութիւնը դէպի եկեղեցին: Եթէ այժմ դաս և տեսնես, անշուշտ կը հիասթափուես, որովհետեւ ցաւալի տեսարան կը ներկայանայ քո առաջ: Բոլոր նրբատաշ ամրապինդ քարերը, բոլոր քանդակները ու արձանագրութիւնները ծածկւած են թանձր սպիտակ իւղաներկի տակ: «Բեթղեհէմը» այլ ևս իւր բարձրութիւնից այն վաղեմի վեմ տպաւորութիւնը չի գործում: Այժմ նա դառել է թղթից շինած մի թեթեւ խաղալիք:

Այս տեսակ բազմաթիւ օրինակներից մինն էլ պատմեմ քեզ: Մեր հանդստարանները օրէց օր զարդարւում են եւրոպական ձևով թանկագին արձաններով թէ մարմարիոնից և թէ Ալզետի ու Քութայիսի գոյնզգոյն քարերից: Բայց մեր առատաձեռն պարոնները, իրանց հանգուցեալների համար ոչինչ չը խնայելու համար, չեն բաւականանում խեղճ քանդակագործի ճարտարութիւնով, որ անթիւ զարդեր է դուրս բերել կոպիտ քարի միջից: Մեծ մասամբ քանդակագործի արհեստանոցից դուրս բերելուն պէս՝ յանձնում են ներկաւարներին, որոնք այս գեղարւեստական աշխատութիւնը անողորմաբար թաղում են իրանց փայլուն իւղաներկի տակ:

Մտի՛ր մեր արխտոկրատների սալօնները և կը տեսնես թանկագին կապերտների և ուրիշ կահ կարասիքի թւում օլէօզրաֆիական անճոռնի նկարներ, որոնք անշուշտ որ և է ամսագրի պրէմիաներ են: Եւ այս մի քանի կոպէկ արժէք ունեցող նկարները դրւած են թանկագին ոսկէզօծած շրջանակների մէջ: Այս իրողութիւնը պարզ բացատրում է սալօնատէր պարոնի հասկացողութիւնն ու ճաշակը: Նա կախ է անում պատկերներ լոկ նորա համար, որ նոյնը տեսել է ուրիշի դահլիճում: Իսկ ինչ վերաբերում է շրջանակին, պէտք է ենթադրել, որ անձամբ գնացել է արհեստանոց, ընտրել է լաւ տեսակը և պատւիրել է:

Այս օրինակը մէջ բերեցի մի բան պարզելու համար, այն է, որ ասիական ժողովուրդը մի շինւածք, հիւսւածք, քանդակւած և այլն գնահատելու համար գլխաւորապէս տեղեկանում է, թէ ի՞նչ

նիւթից է բաղկացած: Նիւթը, որից կազմւած է առարկան, առաջին և գլխաւոր տեղն է բռնում նորա համար, իսկ արեւստն ու ճարտարութիւնը, միտքն ու բովանդակութիւնը՝ երկրորդական:

Ես չեմ կարող մեղադրել, որ նա չի հասկանում թէ մի երաժշտական, նկարչական կամ քանդակագործ լիան հեղինակութեան մէջ կարելի է կարդալ, ինչպէս դրքի մէջ մի ամբողջ բանաստեղծութիւն, մի ողբերգութիւն, մի կատակերգութիւն և այլն:

Բայց մեր ժողովուրդը շատ ընդունակ է ամեն բան շուտով հասկանալու և ըմբռնելու, բայց չէ՞ որ նախ անհրաժեշտ է ցոյց տալ ու հասկացնել:

Ո՞վ մեզանից առիթ չէ ունեցել լսելու մեծ հմուտութեամբ և զգացմունքներով լի նւագածութիւնը տեղական պարզ գործիքների վերայ, կամ ո՞վ մեզանից չի լսել մետալական ազնիւ, հարուստ ձայնը գիւղական խնձոյքներում: Վերջապէս ո՞վ մեզանից չի հանդիպել բնական երաժիշտների, նկարիչների կամ քանդակագործների: Մեր հրաշալի բնութիւնը չի զլանում ստեղծելու գեղարւեստագէտների, բայց մենք՝ անշնորհակալ զաւակներս մեր անհասկացողութեան շնորհիւ սրանց մեռցնում ենք:

Բայց դու չը կարծես, որ միմիայն մենք ենք այս տեսակ ցաւալի իրողութեան մատնւած: Այժմեան ամեն մի յառաջադէմ և քաղաքակրթւած ժողովուրդ մի ժամանակ փորձել է այս բոլորը: Նոյն իսկ անմահ Ռաֆայէլը, Լէօնարդօ-դաւինչին և միւս հանճարները, որոնց վրձինի արտադրութիւնը այժմ միլիօնների հետ չեն փոխի, իրանց կենդանութեան ժամանակ, մօտ չորս հարիւր տարի առաջ, հրաշքներ են գործել զանազան տաճարների պատերի վերայ, չնչին վարձատրութեամբ: Միևնոյն վիճակի մէջ են եղած հանճարեղ քանդակագործներ ու երաժիշտներ. բայց այժմ այն ամբոխը, որից նոքա դուրս են եկած, այնքան յառաջադիմութիւն է արել, որ օրէց օր բազմացնում է գեղարւեստների դպրոցները, գեղարւեստը գիտութեան հետ զուգընթաց տանելու նպատակով: Նոքա քաջ համոզւած են, որ իսկական քաղաքակրթութիւնը միմիայն ուղեղ զարգացնելով չի ձեռք բերում, այլ անհրաժեշտ է նաև հոգու և զգացմունքների ներդաշնակ զարգացումը: Եւրոպական բոլոր միջնակարգ և ստորին ուսումնարաններում անհրաժեշտ առարկայ է նկար-

չութիւնը: Եւ այս բոլորը ոչ թէ այն մտքով է, որ իւրաքանչիւր աշակերտ նկարիչ դառնայ, այլ նրանց զգացմունքներն ու ճաշակը զարգացնելու, նրբացնելու նպատակով է:

Եթէ մենք ձգտում ենք եւրոպական ձևով լուսաւորելու, ուրեմն նախ հարկաւոր է այս ձգտումը կատարելութեան հասցնել:

Ուրեմն, սիրելի՛ ընկեր, յուսանք, որ ապագայում մեր ժողովուրդը նոյնպէս բաղդ կ'ունենայ նոյն վիճակին հասնելու, իսկ առ այժմ՝ ցանկանք, որ եթէ ոչ գեղարւեստական դպրոցներ ունենանք, որոնց մասին մտածելը ցնորք է, այլ մեր միջնակարգ դպրոցներում զիտակցօրէն աւանդւի նկարչութիւնը:

Այս անգամ խնդրեմ բաւականացի՛ր այսքանով, իսկ միւս անգամ լիովին կը պատասխանեմ քո բոլոր նամակներին:

Քո

Գ. Բ.